ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ամերիկաի համար տարեկան 4 տոլար թղթադրմ.
Եւրոպաի և այլ տեղերի համար տրկն. 20 Ֆրանգ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնորդագրութիւնները կը սկսին ամսագլուխներէն (ըստ Ն. Տ.ի) և կանխիկ վճարելի են։ Վեցամսեայ և եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց ուէ յաւելման բաժնեգնին վրայ։
Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia* MARSEILLE (France)

Գ ՏԱՐԻ ԹԻԻ 56
1888 ՄԱՐՏ 3
ՓԵՏՐՎԱՐ 20 (Հ. Տ.)
ՃԱԽԱՊ
Կը հրատարակուի Դ. և Շբթ. օրեր

ՊԱՅՄԱՆՆԵՐ
Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւններն։
Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրներն։
Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Ծանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Rédaction (Rue Vacon, 50)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի Հայաստանցու ձայն.—Հաւատոյքաց Շահպազ Եֆենտուն աքսորուիլը.—Վանի նահանգապետ փաշային վարմատրուիլը.—Ծախսու պատկերներ.—Իմ ճանապարհորդութիւնը 1885ի փետր. ի 20ին (ոտանաւոր). —Տեղական. —Ֆրանսական լուրեր. — Երեսփոխանական ժողովի ջոքեշաբթի օրի նիստը. — Պուլկարական խնդիրը.— Արտասահմանի լուրեր.—Ծանուցումներ. —Բանասիրական (Ազատութիւն Պուլղարիոյ եւ կենսագրութիւնք Պուլղար սպատամբապետաց)։

ՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՑՈՒ ՁԱՅՆ

Բ

Մենք Հայերս անտարբեր ենք ըսի, և այնքան անզգայ անտարբեր՝ որ ազգին ընդհանրութեան բոլորտիք պատող ինքնեկ չահերին ուշք չենք դարձուներ, աչքերնիս կը գոցեմք, կամաւ կը կուրնամք և այս անհեռատեսութեամբ ընդհանրութեան չահին մէջ մեր անձնական չահն իսկ չենք նշմարեր, պաշարուած միայն առժամեայ անապահով չահովն, որ ոչ այլ ինչ է եթէ ոչ ուրիշից աւելցած նիւթապաշտութիւն մը, չարաչար աչխատասիրութեան աննշան վարձ մը, համալչիք մը։

Կարելի՞ է որ դեռ գտնուի մի այնպիսի հայ, որ դեռ ըմբռնած չը լինի թէ աղատ կամ բարեկարգ Հայաստանի հայ գաւառն կը լինի խնամեան մարդ, տէր իւր իրաւանց և կամքի, տէր՝ վայելելու իւր աչխատանքի լիուլի արդիւնքն, և կամ պարզ առած, իր քրտինքով հայթայթած հայի պատառը ուղիղ իրեն բերան տանող մարդ, և ինչ որ այսօր աստանդական ձեռք կուգէ բերել, իր դրան առջեւ պիտի գտնայ։

Երբ այսօր ամեն ազգերը ազի ի բուն անհատական չահերը պաչտպանող ընդհանրական մի զօրութեամբ կը մրցին իրենց դրացեայց հետ, խլելով իրար ձեռքէ չահերը —մեզ նման տկար ազգերը չահագործել —, մենք ինչո՞ւ անտարբեր զայդ կը դիտեմք. էլ Թո՞ւմք որ ուրիշ խլէ մեզնից մեր քրքմինքով պատրաստած հայն, խլէ մեզնից մեր ամեն իրաւունքը, Թողլով մեզ նօթի և տոված. և կարելի՞ է զայս էլ չզգալ. ապա ուրեմն ի՞նչ կարելի է յուսալ մի այսպիսի ազգի ապագայից որ անձնական չահը ընդհանրութեան չահի մէջ չվճնտուղ անհատներից է բաղկացած։

Կը լսուի Թէ հայերի խնդիրը աւելի քան երբէք ուշագրաւ կը լինի, Թողուրիշները—հայկական խնդրի մէջ չահ ունեցողները — իրենց ուզած կերպիւ և մինչեւ իսկ հարիւր տարի յետոյ ունենալիք չահերնուն համար քաշքշեն, իսկ մենք դեռ սպասեմք որպէս զի ուրիշները ծամեն և մեր բերանը դնեն որ կարենամք հանդգնաւթեամբ կուլ տալ, և կամ Թէ Պաղտատի տրալի (ծայլ) պէս արմատենի տակ քամակի վրայ պառկած, բերան բաց սպասեմք որ արմատը ինքնին ուղիղ բերանիս իյնայ, առանց հոգնելու նոյն իսկ փորի, սրտի վրայ և քովը ինկածը վերցնել բերան դնելու համար . . . ։

Ամենաճիշդ կերպով Պաղտատի տռայլին կը նմանին մեր հայ ազգ և էն էլ ղզայան ու խելք բանի հասնող մարդ, գործունեայ և հայրենասէր մարդ. և մենք գոհ լինիմք զի ծառին տակը պառկելը և բերան բանալն ալ գործ մ'է։ Ո՞ գիտէ, գուցէ կոյրզկուրան արժանին մէկ մեր բերան իյնայ . . .

Եթէ այսպէս չէ, հապա ո՞ւր են ազատ երկիրներն աղատ և քաղաքակիրթ հայերի գործերը. ո՞ւր են մեր հայրենասէր սուսուր ընկերութիւնները և ո՞ւր իրենց նպատակին հասնելու գործերը։

Անտարբերութիւն և ծուլութիւն այնպէս կապեր կաչկանդեր են զմեզ որ լրագիր, քարոզ, ատենախօսութիւն չէ, զուռնայով ամեն հայի ականջին փչուելու ալ լինի, կրկին մեր ուղեղի մէջ չպիտի մտնէ Թէ՝ «ամէն հայ անհատի և հայ ընկերութիւններ. ի անդրանիկ պարտականութիւնն է, նոյն իսկ իրենց անձնական չահերի համար, գործել, անդադար գործել, մինչեւ վերջին շունչ գործել. ժամանակ Թանկ է, որչափ ուշանայ, այնչափ աւելի պիտի գժուարանայ խընդրոյն նպատատուր ելքի մը յանգիլն. վերջը ղղյալ օգուտ չի՛ աներ »։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ
ԵՒ
ԿԵՆՍԱԴՐՈՒԹԻՒՆԻՔ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ

Աչխատասիրեաց
ՄԿՐՏԻՉ Ս. ԹԻՒԹԻՒՆՃԻԼՃ
Վիրաբոյժ ի Րուսճուղ

ԿԵՆՍԱԴՐՈՒԹԻՒՆԻՔ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ

15.

Վասիլ Լեվսքի Տիագօն (Սարկաւագ)

(Շար. 55րդ Թիւէն)

Լեվսքի նորէն կը չարունակէ ճամբան և երբ անտառին մէկ նեղ ճամբէն կանցնէր, յանկարծ ծառի մը ճիւղէն կը կախուի և անկարող կըլլայ աղատիլ. նոյն ատեն Թշնամիք կը ձերբակալեն զնա և ուղղակի Սոֆիա կուղարկեն. եղելութիւնը կը հեռագրուի կ. Պոլիս առ Բ. Դուռն և անկից Մազհար փաչան կը խրկուի Լեվսքին դատելու համար։ Հարցաքննութիւնը կսկսի. դատաւորն Լեվսքիի կը հարցնէ Թէ որո՞նք են իւր ընկերները. իսկ Լեվսքի ամենայն քաջութեամբ հետեւեալը կը պատասխանէ Մազհար փաչային. Եթէ կուզէք հասկնալ Թէ իմ ընկերներս որո՞նք են, ամբողջ Պուլղար ազգն է. իմ մահուանէս վերջը հարիւր տարի ետքը պիտի գան ուրիշներ և ինձի պէս պիտի գործեն։

Ժամանակի մէջ սիրելի եղաւ լուսաւորեալ և ազատասէր պուլղարաց. երեք տարի սա ալ չդիմանակեց այս պաչտօնը ամենայն աչխատութեամբ. առանց հանգիստ առնելու գիւղ գիւղ կը չրջէր պուլղարները ազատամարտութեան յարել տալու համար։ 1874 յունիս ամսոյ վերջերը օր մը երբ գաղտնի Թուղթերով Րուսճուքէն ձուրճևվօ անցնելու համար նաւահանգիստը կսպասէր շոգենաւի գալուն, յանկարծ զապթիէ մը մօտենալով նրա անցագիր հարցուց. Քնչօֆ ցոյց տուաւ իւր անվաւեր անցագիրը. զապթիէն Քնչօֆը իր հետ անցագրատուն տարաւ. հոն փորձեցին սենեկի մը մէջ պինք ձերբակալելու, բայց Քնչօֆ չուտ հասկցաւ նոցա դիտաւորութիւնը և յաջողեցաւ անցագրատունէն ինքզինքը դուրս նետել. զապթիէն նորա ետեւէն կը վազէր բռնելու համար. Քնչօֆ տեսաւ որ անկարելի է ազատիլ, նախ գրպանէն գաղտնի Թուղթերը բերանը առնելով կերաւ, յետոյ րէվոլվերով ինքզինքը սպաննեց. անշուշտ Անիկէլ Քնչօֆ ալ երդուընցած էր Թշնամւոց ձեռքը ողջ անձնատուր չըլլալու համար։ Հետեւեալ օրը դիակը յանձնուեցաւ իւր ծերունի հօրը, և Թաղուեցաւ գերեզմանատան մէկ անկիւնը որ ձրի էր։ Թուրք ազգը եթէ իւր յիմարութեանը չափ արԹուն ալ լինէր, կրնար Անիկէլ Քնչօֆի դիակը անդամազննական գործողութեան ենԹարկելով, այն գաղտնի Թուղթերը առամնքան դուրս առնել և տեղեկանալ, բայց Թուրքերը . . .

17.

Խրիսթօ Պօրէֆ

Ռուսահայկան, հայրենասէր և քաջ պատերազմող զօրապետ. ծնաւ ազնուական ընտանիքէ, 1841 օգոստ. 3ին Սրեւելեան Րումէլիի Քալօֆէր գիւղաքաղաքին մէջ։ Սորա յիչատակն ալ կը յարգեն Պուլղարք մինչեւ ցայսօր։

1876 ապրիլ ամսոյ 20ին, Սրեւելեան Րումէլիի Քլիսուրա և Քօրրիվչտիցա գաւառի պուլղարք ապստամբեցան Օսմանեան պետութեան դէմ. այս յեղափոխութիւնը դրեթէ մէկ ամիս տեւեց. Պօթէֆ ալ կուղէր Դանուբը անցնիլ և մի քանի հազար հոգիներով երթալ Պալքանը գըրաւել և յետոյ միանալ Քլիսուրա և Քօրրիվչտիցա ապստամբ խումբերուն հետ։ Պօթէֆ այն Թուականին Ռօմանիոյ Ձուրճևվօ (Եէրկէօյ) քաղաքը կը գտնուէր և վրացան խումբերէ նամակի կսպասէր. երկու օր վերջը գաղտնի Թղթատար մը ուղղակի իւր սիրոջը (Պօթէֆի) սենեակը իջաւ և նամակ յանձնեց նրա։ Պօթէֆ անմիջապէս իւր մտերիմները կոչելով գրալանէն հանեց կնքեալ նամակը և սկսաւ կարդալ հետեւեալը։

Ընթերք իմ ընտրեալ ոճ,
Հովիտներ ծիծաղալից
Եւ գագաթներ ձիւնածածկ
Ի գուրգնոյ (Մուսայից) ։

Ես ոչ ունիմ ոչ ոսկի եւ ոչ արծաթ
Եւ ոչ ալ ունիմ ոսկեշող ոսկերչական
Ոսկերիչներ ինձ պատրաստելու
Ոսկեզօծ ոճեր ։ Ես ոչ ունիմ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

Անցած կիրակի օր կատարուած ե. բեսփոխանական մանկակի ընտրու. թիւնները բաւական յուզում պատ. ճառած են հանրապետականներուն պա. տեհական կուսակցութեան մէջ որով. հետեւ այդ ընտրութիւնները ցոյց կու. տան թէ Ֆրանսայի ժողովուրդը հե. ռզհետէ հեռանալով պատեհապա. շտելիներէն կը յառաջանայ դէպի ար. մատականութիւնը։

—Պատերազմական նախարար զօ. րավար Լօժըրօ Ֆրանսական բանակին վերաբերեալ նոր առաջարկները ներ. կայելով եղմատոյգի Խորհրդարանա. կան Մանսաժողովին, խնդրած է որ պատերազմական նախարարութեան յատկացած վարկին վրայ 1 միլիոն 530 հազար ֆրանգի մի նոր վարկ ևս ա. ւելցուի։

—Պատուանշանները ձախելու ամ. բաստանութեամբ դատաստանի են. թարկուած Վիլսոնի և իր ընկերների դատը վերջացաւ։ Պ. Վիլսոն, Հան. րապետութեան նախորդ նախագահի փեսան, դատապարտուեցաւ 2 տարի բանտարկութեան և 3 հազար ֆրանգ տուգանքի։ Բանտարկութեան պայ. մանաժամին լրանալէն յետոյ 5 տարի զրկուած պիտի մնայ Պատժական Օ. րինագրքի 42րդ յօդուածին մէջ յիշ. ուած իրաւունքներէն ունենալէ։ Պրն. Վիլսոն պիտի դիմէ վճռաքննիչ ա. տեանին։

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԻ ՆԻՍՏԸ

Ֆրանսական Երեսփոխանական ժո. ղովի չորեքշաբթի օրի նստին մէջ, աջակողմեան երեսփոխաններէն Պրն. Պըրթէօլ մի ճառ խօսեցաւ Եւրոպայի արդի քաղաքական վիճակին և Ֆր. ըանսայի հետեւելիք ուղղութեան վե. րայ։ Այդ ճառի գլխաւոր կէտերն կը դնենք Արմենիայի առաջնորդ Թուրն մէջ, իսկ այսօր կը հրատարակենք այն վիճաբանութիւնները որոնք այդ նստի մէջ եղան Վատիկանի Ֆրանսական դեսպանութեան կարեւորութեան և Արեւելքի մէջ Ֆրանսայի ազդեցու. թեան պահպանման նկատմամբ։

Ելեւէջոյին մէջ դիւանագիտա. կան գործակատարներուն յատկացուած ծախքերուն վրայ վիճաբանուած ժա. մանակ, արտաքին գործերի նախա. րար Պ. Պրեաեան խնդրեց Վատիկանի Ֆրանսական դեսպանութեան վերա. հաստատութիւնը որ Ելեւէջոյի Ընդհա. նուր ժողովը չնջել ուզած էր։ «Արդի ժամանակի հանգամանքներն, բաւ, բացարձակապէս կը հրամայեն մեզ որ չարունակենք մի դեսպան ունենալ Ս. Ամոռին մօտ։ Գէշ է պահ մի մէկ կողմ թողուլ մեր ներքին քա. ղաքականութիւն և նկատի առնել Ֆր. ըանսայի դրութիւնը իր արտաքին յարաբերութիւններուն տեսակէտով։ Մի քանի տարիներէ ի վեր, բոլոր պետութիւններն որոնք կենդրոններ ու. նեցած էին Ս. Ամոռին հետ, սկսած են դարձեալ դիւանագիտական յա. րաբերութիւններ հաստատել անոր հետ այնպիսի պատճառներով որոնք թէ՛ Միջերկրական ծովին և թէ՛ ընդ. հանուր քաղաքականութեան վերա. բերեալ չահերի հետ կապ ունին։ Մեր ազդեցութիւն Արեւելքի մէջ ենթակայ եղած է եւրոպական պե. տութիւնների կողմէն յարձակումներ կրելու։ Վատիկանի մօտ մի դեսպան ունենալը՝ Արեւելքի մէջ մեր գործե. լու մէկ գլխաւոր միջոցն է. այդ դես. պանութեան չնջումը քուէարկելէն կը նշանակէ վճռել որ Արեւելքի դպրոց. ներուն տպայները ա՛լ այսուհետեւ ի. տալերէն միայն ծովին։ Հայրենասի. րական մի խնդիր է այս որ Խորհըր. դարանը պիտի ըմբռնէ անշուշտ (Հառաւութեան բազմաթիւ ճչաղա. ղեր)։

Մարսէյլի երեսփոխան Պ. Քամիլ Բելըդան կընդդիմանայ, ըսելով թէ՝ Վատիկանեան դեսպանութիւնը անհրաժեշտ չէ Միջերկրականի նաւարկութեան ազատութիւնը պահպանե. լու համար։ Կը յիշեցնէ թէ Պ. Թիւ. բար, այժմեան նախարարապետն, ինք էր որ 1876ին առաջարկեց Վատիկանեան դեսպանութեան չնջումը և բա. ցատրեց այն ճանապարհն որուկէ կերթայ Հանրապետական կուսակցութիւնը իր եռանդէն (Միջադդեր)։ Առենաբանը կը յարէ թէ՝ «մեր օրէնսդրական հիմ. նադրութիւնների ապահովութեանը և մեր ներքին քաղաքականութեան աղատութեանը համար պէտք է չընչել Ֆրանսայի ունեցած դեսպանու. թիւնը Վատիկանի մէջ։ Կղերը միշտ իրեն թշնամի կը համարի Հանրապե. տութիւնը, և Հանրապետութեան հա. մար ալ մի թշնամի է միշտ կղերակա. նութիւնը։ Մենք արեւելեան աշխար. հին մէջ կաթոլիկ պաշտպանեալները (clientèle) ունինք, բայց անոնցմէ մեր ունեցած արդիւնքներն գլխաւորա. պէս կրօնի առիթներ են։»

Նախարարապետ Պ. Թիւրար կը պա. տասխանէ թէ 1876ին երբ ինք ա. ռաջարկեց չնչել Վատիկանի դեսպա. նութիւնը, այդ ժամանակ մի ցոյց ե. ղած էր Վատիկանի մէջ Ֆրանսական դեսպանին առաջնորդութեամբը ներ. կայացած ուխտաւորներուն դէմ, Ֆր. ըանսական Հանրապետութեան և Վ. ատիկանի դէմ մի թշնամանք սնելու մտքով։ Բայց այսօր գործերը այդ դրութեան մէջ չեն և կարեւոր է Ֆր. ըանսայի դեսպանին առկայութիւնը Վատիկանի մէջ։

Վատիկանի դեսպանութեան պահ. պանութեան համար կառավարութեան առաջարկած ծախքը քուէի դրուե. լով, 240ի դէմ 294 քուէով ընդունե. ուեցաւ։

Պ. Տէշանէլ կառաջարկէ 100,000 ֆրանգ աւելի յատկացնել Արեւել. քի մէջ գտնուած ֆրանսական դպրո. ցներն և հիւանդանոցներն բարե. լաւելու համար, «որպէս զի, կրսէ, կարենանք վայելել Արեւելքի մէջ մեր հովանաւորութենէ յատացած բոլոր բարիքը և արդելք լինել Իտալիոյ սպառ մեծամեծ չանքերուն յաջողու. թեանը որով կաշխատի նա այժմ մեր տեղ բռնել Արեւելքի մէջ։ Զթողո՛ւնք, կրսէ Պ. Տէշանէլ իր ճառի վերջ, չը թողուն մեր նախկին աւանդու. թիւնները և գաղափարները։ Մի ժողո. վուրդ կրնայ ապրիլ միայն իր բա. րոյական ազդեցութեամբ աշխարհի վրայ և իր մատուցած ծառայու. թիւններով։»

Պ. Հանօթօ կը պատասխանէ թէ «Պ. Տէշանէլի առաջարկած բարէփո. խութիւնը ընդունելով քաջալերած կը լինինք կրօնափոխական գործունէու. թիւնը, եթէ չսեմ կրօնամոլութիւնը։ Նոյն իսկ ինք Պապը աւելի մի բան չը պահանջեր առ այժմ։ Կաթոլիկու. թիւն տարածելով չէ որ պիտի զօրա. յունենք մեր դիրք այդ երկիրներուն մէջ։ Մեր լեզուի տարածմանը համար մի ֆրանսական միութիւն՝ շատ աւելի օգտակար կը լինէր։ Բայց պէտք չէ նախարարութեան պահանջածէն աւե. լի վարկեր քուէարկել և Պապէն ա. ւելի կաթոլիկ ցոյց տալ մեզ (Ծափա. հարութիւններ ձախակողմէն)։ Եթէ կա. րելի է մի փոքր ստակ յատկացնել Արեւելքի, աւելի լաւ է ձախսել այդ գումար Կ. Պօլսի հիւանդանոցին հա. մար։» Պ. Հանօթօ այս առիթով կը հարցնէ թէ ինչ եղած է Կ. Պօլսի ֆրանսական հիւանդանոցի վերաշի. նութեան ծրագիրը։ «Պէտք է որ, կրսէ, մենք յետ չձգանք Ալմանիաէն և Իտալիաէն որոնք մօտ ժամանակ. ներ փառաւոր հիւանդանոցներ չինե. ցին այնտեղ։»

Արտաքին գործերի նախարարը կը պատասխանէ թէ չուտով մի ճարտա. րապետ պիտի ղրկուի Կ. Պօլիս, ու. սումնասիրելու համար Բէյրութի Թագ. սիմ թաղին մէջ մի հիւանդանոցի վե. րաշինութեան ծրագիրները իրենց ծախքերով միկտեղ։

Այս վիճաբանութիւններէ յետոյ քուէի դրուելով Պ. Տէշանէլի առա. ջարկած 100 հազար ֆրանգի յատե. լումը, 223ի դէմ 295 ձայնով մեր. ժուած է։

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Ռուս կառավարութիւնը պուլկար ապստամբներուն ուղղուած մի շրջաբերա. կան ղրուեր է Պուլկարիոյ ամեն կող. մերն։ Այդ շրջաբերական յատկապէս չափաւոր լեզուով գրուած է և կը խոստանայ ապստամբներուն որ իրենց առ. արձանները պիտի պահպանուին և բա. նակը պիտի կառավարուի իր այժ. մեան ունեցած օրէնքներովը։

— Կը հաստատուի այն լուր թէ թիւրք կառավարութիւնը չպիտի ու. զէ բռնի այժ գործադրել Պուլկարիոյ դէմ եթէ նոյն իսկ բոլոր մեծ պետու. թիւնները վճռեն Ֆերտինանտ իշխա. նի գահընկեցութիւնը։

Կրետի մէջ Մեծ Եպարքոսը սա նշանաւոր խօսքը խօսած է. «Եթէ Ռու. սիան մեզ աւելի նեղութիւն պատ. ճառէ պուլկարական խնդրով, Սուլ. թանը որոշած է հրաժարիլ իր ու. նեցած վեհապետական իրաւունքնե. րէ մի այնպիսի երկրի վրայ որ իրեն ձանձրոյթ պատճառելէ զատ ուրիշ արդիւնք չունի։»

— «Սթանտարտ»ի Պերլինի թղթակիցը կը գրէ որ Ռուսիան պիտի առաջարկէ մեծ պետութիւններին թէ քանի որ Ֆերտինանտ իշխանի գրու. թեան ապօրինաւորութիւնը կը ճան. չեն, բարեհաճին մի դեսպանաժողով գումարել ի Պօլիս և հոն այդ նկատ. մամբ մի որոշում տալով, գործնական մի վաւերացում տալ իրենց յայտնած այդ կարծիքին։

Նոյն թղթակից սուտ կը հանէ այն լուր թէ Ալմանիան երաշխաւորած է Ռումանիային իր երկրի չեզոքացմանը համար. միայն Աւստրիա տուած է այդ ապահովութիւն Պուքրէշի կա. ռավարութեան և կապահովին թէ Պ. Սթուրձա վերադարձած է Ֆրիտրի. խսրուհէյէն, համոզուելով թէ պէտք չէ որ յոյս դնէ Պիսմարք իշխանին վրայ։

—Պետերբուրգէն փետր. 29ին կը հեռագրեն հետեւեալը. «Ա.հաւասիկ ինչ որ է այժմ Պուլկարական խնդրի վիճակը. Բ. Դուռը չուզեր իր ծախ. քով բանակ ղրկել Պուլկարիոյ վրայ. Ալմանիան և Աւստրիան կը հակառա. կին Ռուսիային իր զօրքերով Պուլ. կարիան գրաւելուն. պետութիւն. ներն իրենց մէջ չեն համաձայնուիր չեզոք զօրքերով գրաւելու մասին ալ»

—Անցած ուրբաթ օր ռուսական դեսպան Պ. Նէլիւոֆէն Բ. Դրան յանձ. նուած յանուցագրի իմաստը այս է.

«Քօպուրկի Ֆերտինանտ իշխանին իբր Պուլկարիոյ իշխան հաստատուե. լուն համար կարեւոր եղող և Պերլինի դաշնագրին մէջ նախատեսուած հա. ւանութիւնը չեն տուած պետու. թիւններն։ Ուրեմն հպատակ իշխա. նապետութեան գլուխը անոր ներկայ գահուիղն ապօրինաւոր է և Պերլինի դաշնագրին հակառակ։ Հետեւապէս, ռուսական կայսերական կառավարու. թիւնը կը խնդրէ Բ. Դուռէն պաշտօ. նապէս ապդարարել զայս Պուլկար կառավարութեան և իր ազդարա. րութիւն հաղորդել նաեւ մեծ պե. տութիւններուն։»

—Սոֆիայէն մարտ 11ին կըհեռա. գրեն հետեւեալը։

«Սթօրաի նահանգապետը ձերբա. կալել տուաւ երկու ազգայներ որոնք գինուորական մի ապստամբութիւն հանել կաշխատէին։ Ֆերտինանտ իշ. խանին դէմ ապստամբական չարժում. ներ յառաջ բերելու համար մահա. ժողովներ կազմուած կան Ալբանիոյ, Հերձէգովինայի և Սրպիոյ մէջ, Պուլ. գար փախստականներուն տեղեկութեան տակ։ Սոֆիոյ մէջ պատերազմի պատ. րաստութիւններ կը տեսնեն։ Կառա. վարութիւնը ձիեր գնել կուտայ Հուն. գարիոյ մէջ։ Այժմ սկսած են հե. տզհետէ հաս ղրկել գնուած ձիերն։»

— Դեսպանաժողովի գումարման լուրը անհիմ կը համարուի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Պետերբուրգէն փետր. 26ին կի.

մացուներն հետեւեալ դէպքը. «Զաբլին եղբօր Վլատիմիր Մեծ Դքսի պալատին մէջ մի մեծ պարահանդէս տրուեցաւ։ Զարուհին հոն եկած էր Տանիմարքացի նշանաւոր աղջկան հագուստներով։ Զարը երբ տեսաւ ինք այդ կերպարանքով, հրամայեց որ երթայ փոխէ այդ հագուստները և այնպէս վերադառնայ պարահանդէսը։ Զարուհին գնաց, բայց փոխանակ իւր ամուսնի հրամանին համեմատ վարուելու, ա՛լ չվերադարձաւ։ Այս դէպք զանազան մեկնութիւնների առարկայ եղած է։»

—Իտալական բանակին գլխաւոր հրամանատարը Մասաւային փետր. 28ին հետեւեալ հեռագիրը ղրկած է Հռոմի պատերազմական նախարարին. «Մարտ աղբիւրներէ քաղած տեղեկութիւններէս կը հետեւցունեմ որ Նէկիւսը (Հապէշի Թագաւորը) մոռած է Տէպարղան, թերեւս արդէն Ամարա կը դանուի. մի յայտարարութիւն հանած է որով կը հրաւիրէ ղինուած բոլոր մարդերն իւր եռեւէ քալել Իտալացիներին դէմ և յոյս կը յայտնէ որ իւր անթիւ զօրաբանակով բնաջինջ պիտի անէ Իտալացիներն։ Վատահ է որ յաղթութենէն յետոյ Ասասոյ օգնութեամբը պիտի նուաճէ նաեւ Սուսանը։»

—Ռուսիան Օտէսայի մէջ պատրաստութիւններ կը տեսնէ զօրքերի փոխադրութեան համար, բայց յայտնի չէ թէ դէպի ո՞ր։

—Ֆրանսական կառավարութիւնը պաշտօնապէս յայտնեց Անգլիոյն ինչ առարկութիւններ որ արած է Բ. Դուռը Սուէզի ջրանցին վերաբերեալ անգլօ-ֆրանսական դաշնագրին նկատմամբ։ Փարիզի անգլիական դեսպան Լորտ Լիթըն խմացուց որ Անգլիան յօժար չէ ընդունելու Բ. Դրան այն առաջարկ թէ ինք իրաւունք ունենայ իւր յարմար տեսած կերպով գործածել ջրանցը, Օսմանեան երկիրների պաշտպանութեան համար կարմիր ծովին մէջ։ Հակով մանաւանդ նախագահին մի օսմանցի լինելուն համար եղած առաջարկն ալ չատ կարեւոր չերեւիր Անգլիային, թէեւ այդ կէտի վրայ թերեւս աւելի դիւրին լինի համաձայնութիւը։ Մի քանի օրէն, Լորտ Սալզպըրի պաշտօնապէս պիտի ներկայացունէ իւր հակառաջարկները։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

CONSTANTIN P. CHÉHIANTZ
Négociant-commissionnaire
à Milan (Italie)

Հայ վաճառականները որոնք կը փափագին ուղղակի յարաբերութեան մտնել Գ. Կոստանդին Շէհեանցի պատուաւոր Հայ վաճառատան հետ, յանձնարարութեամբ ամեն տեսակ ապրանքներ գնելու կամ ծախելու համար, պէտք է դիմեն ուղղակի հետեւեալ հասցէին.

Monsieur Constantin P. Chéhiantz
No 18, Via Lauro, 18
Milan (Italie)

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ ԱԶԴ

Հարկ կը համարինք ծանուցանել Արմենիայի բաժնորդ դրամիլ ցանկացողներին որ չուղղելով ուշէ մնացորդ հաշիւ ունենալ մեր բաժնորդների հետ լրագրի Դ տարեշրջանին վերջ (1888 յուլիսի վերջ), այսուհետեւ տարեկան բաժնորդագրութիւն չենք կարող ընդունիլ Արմենիայի համար։

Ինչպէս դրուած է արդէն Արմենիայի ճակատը, բաժնորդագրութիւնները կը սկսին ամեագրլուխներէն (Նոր Տոմարի համեմատ)։ Ուստի անհնար որ կուզեն իրենց բաժնորդագրութիւնը պատուել և քաջալերել Արմենիան, իրենց սկսած ամսագրութիւնէ մինչեւ 1888 Յունիսի վերջ ամէն մէկ եռամսեայի համար 5 ֆր. հաշուելով պէտք է ղրկեն բաժնորդագիրն. իսկ երէք եռամսեաներէն դուրս մէկ կամ երկու ամիս ալ ձգայ մինչեւ 1888 Յունիսի վերջ, պէտք է 2 ֆր. հաշուել մէկ ամսի համար։

CHANSONS ARMÉNIENNES

Transcrites par Camille RONCHI
à MILAN (Italie).

1. — I. *Souvenir d'Erzeroum*, II. *Souvenir de Kars*, III. *Souvenir d'Erivan*, Prix 3 francs.

2. — *Etoile d'Arménie*, mazurka pour piano, prix 2 fr. 50.

3. — *Aux Bords de l'Arax*, mazurka pour piano, prix 2 fr. 50.

Միլանի հմուտ ձայնագրագէտներէն Պ. Քամիլ Բօնքի հրատարակած է վերոգրեալ 3 տետրակները որոց առաջին երկուքը նուիրած է հայ վաճառականներէն Պ. Կոստանդին Շէհեանցի անուանին և երրորդը Պ. Գրիգոր Դանիէլեանցի։

Առաջինը կը պարունակէ հայկական երեք երգերի ձայնագրեալ եղանակներն. էրզրումի յիշատակ վերնագրով ձայնագրուածը ունի «Ձայնը հնչեց էրզրումէն» երգի եղանակը, կարսի յիշատակ «Ա յծեմիկ»ի եղանակն է և երեւանի յիշատակը «Ի՞նչ քար սիրա լինի»ի եղանակով։

Միւս երկու տետրակներն ալ, Ատղ Արմենիայի և Երասխի ափերուն, դաշնամուրի համար յօրինուած մաղուրքաներ են։

Այս ձայնագրեալ տետրակներէ ունենալ ցանկացողներն կարող են դիմել խմբագրութեանս որ կը ղրկէ իրենց վրայ նշանակուած գներովը, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով. այսինքն Ա. տետրակը 3 ֆր. և միւս տետրակներն 2 ֆր. և 50 սանդիմ իւրաքանչիւրը։

ՀԱՅԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՕՏԱՐՆԵՐԻ ԱԶԲՈՒՄ

ՓՈՐՁի խմբագրատեղ Մեծ. Պրն. Աբգար Յովհաննէսեանի կազդացած մի հրատարակական դասախօսութիւնն է Հայկական խնդրին նկատմամբ Թիֆլիսի ժողովարանին մէջ 1879 թ. մայիսի 17ին։ Կը ներկայացունէ եւրոպացիների նկատողութիւնները Հայերի մասին և կը նկարագրէ Լոնտոնի Անգլօ-Հայկական Մանաժողովի արած միխիթնկը 1878 յուլիսին, Հայկական խնդրին համար։ Կը ծախսուի «Արմենիա»ի խմբագրատունն։ Դինն է 1 ֆր., փոստի ծախքը մեր վրայ։

Հայրենասիրական հրատարակութիւններ

Արմենիայի խմբագրատունը ծախսու կը դանուին հետեւեալ ազգանպաստ վէպիկները, որոնք Պետերբուրգ տպագրուած են, յատկապէս հայ ժողովրդին մէջ անձնազոհութեան և հայրենասիրութեան գաղափարները տարածելու նպատակով։

1. Ուրիշի գերեզմանի վրայ առաջց արտասուքի են լաց լինում. (Նիւթը առնուած է Հայերի կրած հարստահարութիւններէն Տաճկահայաստանի մէջ, վաչխառու հայ հարուստների և զաղզաթարոյ ու բարբարոս գայմագամների ձեռքէն)։ Գինն է 20 սնդ.

2. Բուդդար աւազակապետ. (Քրիստոնեաների հանգստութեանը համար Թիւրքիոյ ստորագրած դաշնադրներին մեռած տառերը լինելը ցոյց կուտայ. կը նկարագրէ մի մահմետական գաղանութեան զոհ եղած մի բուղդար ընտանիքի սրտաճմլիկ դրութիւնը և վրիժառութեան համար գործնական միջոցներ ցոյց կուտայ)։ 20 սանդիմ.

3. Ժանճա տ'Արք—Գաղղիոյ ազատող (Ետաերին յայտնի է այս մանկամարդ հովուհուն, այս գիւղացի աղջկան հայրենասիրական եռանդը որով մի խումբ մարդիկ գլուխը ժողված, հինանալի յաղթութիւններ տարաւ Անգլիացիներին դէմ երբ ասոնք ամեն կողմէ ճնշած և նեղը ձգած էին Ֆրանսան)։ 15 սնդմ.

4. Նեղա — Տատիս պատմածը (Նիւթը առնուած է Թիւրքերի ահրապարտութեան ժամանակ Պուլկարիոյ մէջ Տէլիպաշներուն արած բարբարոսութիւններէն)։ 20 սնդմ.

5. Դօնջօ — Բուդդար աւազակապետի պատմածը (Հարստահարուած հայրենիքի վրէժն առնելու համար՝ կնոջ մահնակցութեամբ կազմուած մի աւազակային խմբի գործերն կը պատմէ)։ 20 սանդիմ.

Վերոգրեալ տետրակներն կը ղրկուին իրենց առջեւ նշանակուած գիներով, փոստի ծախքը Արմենիայի խմբագրութենէն վճարուելով։ Ով որ 20 տետրակ գնէ մէկ անգամէն, այսինքն չորս օրինակ իւրաքանչիւր տետրակէն, 0/0ին 12 դեզչ կանենք վերոգրեալ գներուն վրայ, այսինքն կը ստանանք 20 տետրակին համար 3 ֆր. և 35 սանդիմ, փոխանակ 3 ֆր. և 80 սանդիմի։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիւղ չղրկուիր։

CONTES GRIVOIS
DEUXIÈME SÉRIE

Par Evariste Carrance

La deuxième série de ces *contes rabelaisiens* vient de paraitre. Elle est digne de la première dont le succès énorme n'est pas épuisé. La deuxième série contient des contes salés : Le Pélerinage, Le Mari gourmand, Les deux Huissiers, Le petit Pain, Les deux Pochards, Selon l'Evangile. Il faut lire cela pour rire à se tordre.

Adresser, pour recevoir le petit volume *franco*, 50 centimes à M. le Directeur de la Revue Française, 6, rue du à Saumon, Agen.

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Փափաքելով որ Արմենիան տարածուի նաեւ մեր հայրենակիցներն այն դասակարգի մէջ որոնք դիւրութիւն չեն ունենար 5 ֆրանգ մէկ անգամէն վճարել և դէթ 3 ամսով բաժնորդագրուիլ, որոշեցինք հասուլ նաեւ ծախել տալ Արմենիան Եգիպտոսի, Պուլկարիոյ, Ռումանիոյ, Ամերիկայի մէջ և այլ տեղեր ուր որ փափագ յայտնուի։ Արմենիան պիտի ծախսուի ամեն տեղ ՀԱՏՐ 20 ՍԱՆԹԻՄ, նայն տեղի համարժէք դրամագլ։

Արմենիայի Խմբագիր-Տնօրէնը այս կերպով մի զոհողութիւն եւս յանձն կառնէ տարածելու համար այս ազգային թերթ Թիւրքիոյ և Ռուսիոյ դուրս գտնուած Հայերի ամեն դասակարգերին մէջ։

Արմենիան հասուլ ծախելով տարածել ցանկացողներին բաւական մի դեղչ կը լինի 20 սանթիմին վրայ։ Պայմանների մասին նամակով դիմել Խմբագիր-Տնօրէնին։

Կը յուսանք որ մեր բարեկամները չեն զլանար իրենց աջակցութիւն, այս միջոցով եւս տարածելու համար Արմենիան։

Արմենիան հասուլ կը ծախսուի 25 պանի Բուամանիայի Պրայիլա քաղաքը, Պուլվար Բուլա, 252, Պրն. Գրիգոր Աբրահամեանի խանութը ուր կրգըտնուին նաեւ «Հայ գիւղացին ուսումի մը», «Հայ գիւղացի» և «Մարմա Իսրայէլի» տետրակները։ Այդ տետրակներէ կամ Արմենիա գնել ցանկացող Ռումանացիները կարող են նաեւ ըստակի փոխարէն բումանական նամականիշեր գնել իրենց նամակի մէջ և ղրկել Պ. Գ. Աբրահամեանին, որով աւելի դիւրութիւն կը լինի իրենց։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՅ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Եւրոպայի մէջ բնակած մի Հայի Հայաստանի վրայ արած խորհրդածութիւններով կը սկսի և մի Անգլիացու բերնով կը պատմէ երեւանցի մի հայ աղջկան հաստատամտութիւնը մահմետական կրօնը չընդունելու և իր հայ նշանածի հաւատարիմ մնալու համար), 50 սանթիմ.

Բ. ՀԱՅ ԴԻՒՂԱՅԻ (Հայ գիւղացիների բուն վիճակը որ չատերին անծանօթ մնացած է, ուսումնասիրելու պէտքը կը ներկայացունէ), 20 սանթիմ.

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ (Հայաստանի ազատութեան ցանկացող մի Հայի մտքին քներն և մտածումներն են Սաղմոսի ոճով գրուած), 40 սնթմ.

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : Félix ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. Schickler rue Vacon 50.